

## «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երեւան, 04 մարտի 2009թ.

### Մամուլի հաղորդագրություն

#### Հայաստանն ըստ «2009թ. Ջրոսաշրջության մրցունակության զեկույցի» զրոսաշրջության մրցունակությամբ 91-րդն է 133 երկրների շարքում

Ըստ Ջրոսաշրջության մրցունակության համաթվի Հայաստանի մրցունակությունն էական փոփոխությունների չի ենթարկվել համեմատած 2008 թվականի հետ՝ զիջելով դիրքերը միայն 2 տեղով: Հայաստանը երրորդ տարին է, ինչ ներգրաված է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող Ջրոսաշրջության մրցունակության զեկույցում: Ջրոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկիրների ցանկը, ինչպես և նախորդ տարի, գլխավորում են Շվեյցարիան, Ավստրիան և Գերմանիան: Մրցունակությամբ ամենաթույլ երկրներն են Բուրունդին, Լեսոտոն և Չադը:

#### Ջրոսաշրջության մրցունակության համաթիվ

Ջրոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զրոսաշրջության բնագավառում, բաղկացած է 3 ենթահամաթվերից, որոնք հաշվարկվում են 14 հենասյուների գնահատականների հիման վրա:

#### Ջրոսաշրջության մրցունակության համաթիվ

##### Ենթահամաթիվ A Ջրոսաշրջության կանոնակարգող դաշտ

- Օրենքներ և կանոնակարգեր
- Շրջակա միջավայրի կայունություն
- Ապահովություն և անվտանգություն
- Սանիտարահիգիենիկ պայմաններ և առողջապահություն
- Ջրոսաշրջության զերակայությունը

##### Ենթահամաթիվ B Ջրոսաշրջության բիզնես միջավայր և ենթակառուցվածքներ


- Օդային տրանսպորտի ենթակառուցվածք
- Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք
- Ջրոսաշրջության ենթակառուցվածք
- ՏՀՏ ենթակառուցվածք
- Ջրոսաշրջության գնային մրցունակությունը

##### Ենթահամաթիվ C Ջրոսաշրջության մարդկային, մշակութային և բնական ռեսուրսներ

- Մարդկային ռեսուրսներ
- Բնակչության զրոսաշրջության ընկալումը
- Բնական ռեսուրսներ
- Մշակութային ռեսուրսներ


## Հայաստանի արդյունքներն ըստ ենթահամաթվերի

### Ջրոսաշրջության կանոնակարգող դաշտ



Այս ենթահամաթվի առումով Հայաստանը դիրքը զիջել է 14 տեղով: Հայաստանում վիճակը բավականին բարվոք է ապահովության եւ անվտանգության, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանների եւ առողջապահության առումով՝ գրանցելով դրական տեղաշարժ նախորդ տարվա համեմատ: Սակայն Հայաստանում դեռևս լուրջ խնդիր են շրջակա միջավայրի պաշտպանությունը եւ զբոսաշրջության ոլորտին առաջնայնություն տալը: Հայաստանի դիրքի վրա բացասաբար են ազդել շրջակա միջավայրի օրենսդրության խստության եւ կիրառման ցածր մակարդակը (118 եւ 128-րդ տեղեր), վիզայի պահանջները (117-րդ տեղ), շրջակա միջավայրին վերաբերող կոնվենցիաներին մասնակցության սահմանափակությունը (114-րդ տեղ), պետական քաղաքականության մշակման ոչ լիարժեք թափանցիկությունը (103-րդ տեղ), ոստիկանության վստահելիության ցածր աստիճանը (95-րդ տեղ) եւ օդային հաղորդակցության բնագավառում երկկողմ համաձայնագրերի սահմանափակ քանակը (89-րդ տեղ):

### Ջրոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք




Հայաստանի դիրքը զբոսաշրջության բիզնես միջավայրի եւ ենթակառուցվածքի ենթահամաթվի առումով բարելավվել է երեք տեղով: Դրան նպաստել է ենթակառուցվածքների հենասյուների գնահատականների բարելավումը: Ըստ զեկույցի բիզնես միջավայրի եւ ենթակառուցվածքի առումով Հայաստանի միակ առավելությունն է զբոսաշրջության ոլորտի գնային մրցունակությունը, որը սակայն նվազել է նախորդ տարվա համեմատ: Հայաստանը զիջել է

դիրքերն ավիատոմսերի գնի, հյուրանոցների գների համաթվի, գնողունակության պարիտետի եւ հարկային բեռի տեսանկյունից:

Ջրոսաշրջային ենթակառուցվածքի ցածր գնահատականի վրա էապես ազդել է հյուրանոցային սենյակների սահմանափակ թիվը եւ մեքենաների վարձույթով զբաղվող միջազգային հայտնի ընկերությունների թույլ ներկայացվածությունը: Հայաստանն այլ երկրներին զիջում է նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակի առումով: Օդային եւ վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքը, թեւ գրանցել է որոշակի առաջընթաց նախորդ տարվա համեմատ, սակայն հանդիսանում են Հայաստանի հիմնական մրցակցային թերություններից:

**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**



Այս ենթահամաթվի առումով Հայաստանի դիրքը նվազել է 8 տեղով: Հայաստանի մրցակցային առավելություններից է բնակչության բաց եւ բարեհամբույր վերաբերմունքն օտարերկրյա այցելուների նկատմամբ:


Աշխատաշուկայի ճկունությունը՝ աշխատակիցների աշխատանքի ընդունման եւ ազատման դյուրինությունը, թեւ բարձր է պահում Հայաստանի դիրքն ըստ մարկային ռեսուրսների հենասյունի, սակայն դեռևս լուրջ խնդիր է մնում աշխատուժի որակը: Մի կողմից կրթական հաստատությունները չեն կարող ապահովել համապատասխան որակավորմամբ մասնագետներ, մյուս կողմից ընկերություններն իրենք բավարար ներդրումներ չեն կատարում աշխատակիցների վերապատրաստման համար:

Հայաստանի բնական ռեսուրսները երկրի զբոսաշրջության մրցակցային թերություններից է, քանի որ Հայաստանը չունի ոչ մի Համաշխարհային բնական ժառանգության վայր եւ երկրի ընդհանուր տարածքի միայն 8.2 տոկոսն է դասվում հատուկ պահպանվող տարածքների թվին: Ի հավելումն, Հայաստանում բավականին բարձր է շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակը: Համաշխարհային մշակութային ժառանգության հանդիսացող 4 պատմամշակութային վայրով Հայաստանը գրավում է 54-րդ տեղը, իսկ կենդանիների եւ թռչունների բազմազանությամբ՝ 100-րդ տեղը:

**Հայաստանի դիրքը համեմատած Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ Միջին Արեւելքի համադրելի երկրների հետ**

Հայաստանի արդյունքերի վերլուծությունը մատնանշում է այն ոլորտները, որոնց վրա մեծ ուշադրություն պետք է դարձնել: Սակայն թե այդ նույն երեւոյթները որքանով են հրատապ բնույթ կրում, կարելի է գնահատել Հայաստանի դիրքերը համեմատելով այլ երկրների հետ, մասնավորապես, համադրելի համարվող երկրների հետ: Որպես այդպիսի երկրներ են դիտարկվել Արեւելյան Եվրոպայի, ԱՊՀ եւ Միջին Արեւելքի երկրները:

**Ձրոսաշրջության մրցունակության համաթիվը համադրելի երկրներում**




2009 թ.-ին այս երկրների խմբում ամենամրցունակ երկիրը Չեխիան է՝ առաջ անցնելով անցած տարվա առաջատար Էստոնիայից: Հայաստանը զիջում է Արեւելյան Եվրոպայի եւ Միջին Արեւելքի բոլոր երկրներին: ԱՊՀ երկրների թվում Հայաստանը գրավել է 5-րդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին (59), Վրաստանին (73), Ադրբեջանին (76) եւ Ուկրաինային (77):

**Ձրոսաշրջության կանոնակարգող դաշտ**

Ըստ զրոսաշրջության կանոնակարգող դաշտի ենթահամաթվի Արեւելյան Եվրոպայի առաջատարը Չեխիան է, որին հետեւում են Էստոնիան եւ Հունգարիան: Հայաստանն այս տարածաշրջանի երկրներից առաջ է միայն Ռումինիայից եւ Մակեդոնիայից: ԱՊՀ տարածաշրջանում Հայաստանը զիջում է միայն Վրաստանին եւ Ադրբեջանին: Միջին Արեւելքի երկրների Հայաստանն առաջ է անցել Սիրիայից եւ Թուրքիայից:


**Ձրոսաշրջության կանոնակարգող դաշտ**



**Ջրոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք**

Ըստ զբոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք ենթահամաթվի՝ Հայաստանը բավականին թույլ դիրքեր է զբաղեցնում՝ 105-րդ տեղը՝ մեծապես զիջելով Արեւելյան Եվրոպայի երկրներին եւ Միջին Արեւելքի տարածաշրջանի երկրներին: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը զերգանցում է կրկին միայն Տաջիկստանին եւ Ղրղզստանին: Արեւելյան Եվրոպայի երկրների շարքում առաջատարը Էստոնիան է, ինչը պայմանավորված է հիմնականում զբոսաշրջության, ՏՀՏ եւ վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակով: ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը: Իսրայելն առաջատար դիրքերում է Միջին Արեւելքի երկրների շարքում, մասնավորապես զարգացած ՏՀՏ ենթակառուցվածքի շնորհիվ:


**Ջրոսաշրջության բիզնես միջավայր եւ ենթակառուցվածք**



**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**

Ըստ զբոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ համաթվի Արեւելյան Եվրոպայի առաջատարը Չեխիան է՝ տիրապետելով մշակութային եւ բնական հարուստ ռեսուրսների: Հայաստանը կրկին զիջում է այս տարածաշրջանի բոլոր երկրներին: ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը միայն զիջում է Ռուսաստանին եւ Վրաստանին: Միջին Արեւելքում Հայաստանը հետ է մնում տարածաշրջանի բոլոր երկրներից:

**Ջրոսաշրջության մարդկային, մշակութային եւ բնական ռեսուրսներ**



## **Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացման մարտահրավերները**

Ջբոսաշրջությունն համարվում է Հայաստանի տնտեսության հեռանկարային ոլորտներից մեկը, որն իր արտադրումն է գտել նաև կառավարության ռազմավարական զարգացման ծրագրերում: Ոլորտի ներկայիս զարգացման հիմնական խնդիրներն են.

- երկրի մատչելիության դյուրինացումը (օդային հաղորդակցություն, մուտքի վիզաներ),
- զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավումը (հյուրանոցներ, ճանապարհներ),
- երկրի որպես գրավիչ զբոսաշրջային վայր ներկայացման արդյունավետության բարձրացումը,
- զբոսաշրջային առկա ակտիվների պահպանումը եւ բարելավումը, ինչպես նաև նորերի ստեղծումը:

Ջբոսաշրջության հեռանկարային զարգացման տեսանկյունից առավել կարելի էր կունենան շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրները եւ Հայաստանի կողմից կայուն զբոսաշրջության զարգացման ուղու որդեգրումը:

Հաշվի առնելով ռեսուրսների սահմանափակությունը, որոնք կուղղվեն զբոսաշրջության ոլորտի զարգացմանը՝ Հայաստանի հաջողության գրավական կհանդիսանա զբոսաշրջության շուկայում ճիշտ դիրքավորումը, այն է, համապատասխան «որմնախորշի» ընտրությունը, որում Հայաստանը կարող է ձեռք բերել մրցակցային առավելություններ, ինչպես նաև միասնական նպատակների շուրջ շահագրգիռ կողմերի (մասնավոր, պետական, միջազգային եւ կրթական կառույցներ) ջանքերի համախմբումը եւ ռազմավարության հետևողական իրականացումը:

### **Ջբոսաշրջության մրցունակության զեկույցի մասին**

Ջբոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցը առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՅՏՖ): ՅՏՖ-ն երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Ջբոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի, որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ եւ թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթիվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների բազաները՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Ջեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz Allen Hamilton, IATA, UNWTO, WTTC, եւ գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՅՏՖ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը:

### **«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)**

«Տնտեսություն եւ արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների եւ խորհրդատուների ցանցի միջոցով:

«Տնտեսություն եւ արժեքներ»-ը, լինելով Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր, հրատարակում է ազգային մրցունակության ամենամյա զեկույցը եւ ուսումնասիրում սփյուռքի ցանցերի, օտարերկրյա ներդրումների եւ արժեքների հետ կապված հարցերը:

Ի-վի Քոնսալթինգ ՓԲԸ-ն «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնի բիզնես խորհրդատվական կառույցն է, որը գործարար խորհրդատվական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

*Հովսեփ Էմին 123*

*Երևան-0051 Հեռ. +374 10 21 97 40*

[info@ev.am](mailto:info@ev.am)

[www.ev.am](http://www.ev.am), [www.evconsulting.am](http://www.evconsulting.am)